## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

«15» «ապրիլի» 2024թ. N ՄՈ/177-Ա

ք. Արմավիր

### ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2323-Ն որոշման N9.1 հավելվածը.

*որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության 2024 թվականին պետական բյուջեից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին «Արտադպրոցական դաստիարակության ծրագիր» ծրագրով տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 2 978 300 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասունութ հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարից 1 950 300 (մեկ միլիոն ինը հարյուր հիսուն հազար երեք հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ գումարը վերաբաշխել՝ համաձայն հավելվածի:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ՝ Ա.Հովհաննիսյանին կնքել նպաստի հատկացման պայմանագրեր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-04-15 11:56:19 GMT+4
Հաստատված է EHDTS-ի կողմից

**ՄԱՐԶՊԵՏ՝** **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հավելված
ՀՀ Արմավիրի մարզպետի
2024 թվականի ապրիլի 15-ի
N ՄՈ/177-Ա որոշման

*Գումարի հատկացման ժամանակացույց*

*Հազար դրամ*

| *h/h* | *Համայնքի անվանումը* | *1-ին եռամսյակ* | *Կիսամյակ* | *Ինն ամիս* | *Տարի* |
|---|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5* | *6* |
| **1** | Վաղարշապատի համայնքապետարանի «Մակար Եկմալյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոց» ՀՈԱԿ | | 403.0 | 644.8 | 644.8 |
| **2** | Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Շառլ Անզնավուրի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ | | 386.2 | 617.9 | 617.9 |
| **3** | Փարաքարի Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ | | 429.8 | 687.6 | 687.6 |

***ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝*** ***Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ***

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 15.04.2024 11:21:50 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023